բում նեղ . . . յանաւրինաց . . . հանչող . . . նահանգ . . . հռչակ . . . ուխտիս վերինն . . . (մի էջ փտած) . . . գրչի Գրիգոր . . . աբեղայի . . . ի խնդրոյ յաւրինեաց երից երանեալ երջանիկ և սրբասէր աբեղայի Յովհաննէս վերաձայնելոյ։ Առ որ է . . . (2 էջ փտած) . . . բարեպաշտ ծնող հաւրն իւրոյ Կոստանին . . . ։ »

« Ի արքեպիսկոպոսէն Ռ. դկն. տարաւ ՃԾ. լիտր ցորեն»

« Խանչալ ՃԾ. դկն. դկնի. ապրիշումէ գոտիկ առաւ.»

« Առաքէլ եպիսկոպոսէն . . . » ևլն, ևլն.

Ցուխուրղանի եկեղեցիէն բերուած ձեռագիր աւետարանի յիշատակարանն է

« Փառք ամենասուրբ . . . գրեցաւ ձեռամբն Ջրուանդին, Ասւատրին . . . յիշատակ . . . Ջրուանդն և իւր կողակիցն Գուլնիգարն որդւոյն Խլղաթին . . . դստերն Շահմալեքին։ Դարձեալ . . . զԱսւատուրն . . . կողակիցն Սանդուխըն . . . որդւոյն Ղազարին . . . խաւրն Ղազարին . . . ։ »

« Գնեցաւ . . . ՌԾԵ. ին. ի հայրապետութեան , . . Մելքիսէթ կաթուղիկոսին, Առաջնորդութեամբ Պարսամ եպիսկոպոսին, փատիշահութեան Շահաբազին, Պարնութեան Ամիր խանին . . . ։ Գնեցաւ այգիս [1] ըռէս Շաղաւթի տարին— իւր ձեռովն ամէն։ »

« Ամիրի վկայութիւն, Ներսէսի վկայութեամբ Դուպաթի տղայն . . . Աստապատցի Ալավալին ծախեցի Ջրուանդին . . . ։ »

« Ես Ղուկասս տվի Ս. Սարգիսին ա. խալի ա. բուրվառ . . . ։ »

Վերի աւետարանի մի ընկերն աւելի հին և փտած լինելով հազիւ այս քանի բառերն գրի առի։

« Ես Գիւզինալ քոյրն . . . գին Ս. աւետարանիս Գ. ոսկիս, որ եդաք ի դուռն և ի գիւղն Կ. . մանայ Ս. խաչին և Ս. գերեզմանացն Յոհան Ոսկիաբանին և Գրիգորի Աստուածաբանիս . . . ։ »

---

1. Այս օր եւս այս այգին Ս. Էջմիածնայ կը պատկանի, դեռ շատ ժամանակ չէ հայ բնակչէ թափուր մնացած է Ցուխուրղան գիւղն։